Ձով գիշերը մոռանալ տոեց մեզ ցերեկոայ տօթից կրած տանջանքը: Ծովի կողմից փչում էր մեղմ քամի եւ բերում էր իր հետ ծաղկաւէտ Արտոսի սքանչելի անուշահոտութիւնը: Երկինքը ամպամած էր, ոչ մի աստղ չէր երեւում: Երբեմն մաղւում էին անձրեւի խոշոր կաթիլներ: Հայկայ բերդի կողմում փայլատակում էր. լսելի էին լինում որոտման խուլ ձայներ: Ինձ թւում էր, որ հայոց եւ բաբելացոց հսկաները պատերազմում էին այնտեղ եւ իրանց ահագին լախտերով խորտակում էին լեռները:

Մուրադը եւ իր ընկերը զբաղոած էին ձիաներով. ծածկում էին նրանց չուլերով, զգուշանալով, մի գուցէ յորդ անձրեւ գալու լինի եւ ձիաներին թրջէ: Ես պառկած էի խոտերի վրայ, նայում էի անթափանցիկ խաւարի մէջ: Մո՜ւթն էր, մո՜ւթ, ոչինչ չէր երեւում: Ամէն ինչ ընկղմոած էր մթութեան մէջ, որպէս այդ երկրի մթին ապագան...

Իմ աչքերի առջեւն էր մի պատկեր միայն՝ ալեւոր «գուշակողը»: Իմ գլխում, մռայլ առեղծոածների նման, պտտւում էին այդ խորհրդաւոր ծերունու խօսքերը: Այդ խօսքերը առանձին բացատրութեան էին կարօտ, ես անկարող էի լուծել: Բայց ես այժմ գիտէի երկու անուններ, որոնք շատ բան էին պարզում: Մուրա՜դ եւ քաւոր Պետրո՜ս, երկուսն էլ երեւելի խաչագողներ էին: Որպէս երկու հերոսներ այդ մթին արհեստի մէջ, Սալմաստում մեծ հռչակ էին ստացել նրանք: Նրանց մասին ես լսել էի շատ եւ շատ զարմանալի պատմութիւններ...

Իմ տարակուսանքները մասամբ փարատոեցան: Ճանապարհին գալու ժամանակ ինձ երկար տանջում էր այն միտքը, որ ես մի ժամանակ պէտք է տեսած լինէի Մուրադին. նրա դէմքը ինձ ծանօթ էր երեւում: Իմ յիշողութիւնը չխաբեց ինձ. այժմ գիտէի, թէ որտեղ էի տեսել:

Յիշո՞ւմ ես, ընթերցող, այն տխուր, փոթորկալի գիշերը, երբ ես, տէր Թոդիկի դպրոցից փախստական եղած, թափառում էի Հին-քաղաքի շուրջը եւ, անհնարին յուսահատութեան մէջ մոլորոած, չգիտէի ուր գնալ: Այն ժամանակ հանդիպեց Կարօն, տարաւ ինձ արաբական մինարեթը, այն հին աւերակների մէջ: Այնտեղ առաջին անգամ ես տեսայ Կարօյի միւս ընկերներին՝ Ասլանին եւ Սագօյին: Այդ խումբի մէջն էր եւ Մուրադը իր այժմեան ընկերի հետ, որին Ջալլադ էին կոչում: Երբ գիշերը լուսացաւ, առաւօտեան Մուրադը եւ Ջալլադը անյայտացած էին. մինարեթում մնացել էին միւսները: Ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, այդ մասին ինձ ոչինչ չասացին: Ամիսներ անցան, այժմ կրկին հանդիպում էի այդ երկու երիտասարդներին, բայց մի այլ շրջանում եւ բոլորովին տարբեր պարապմունքի մէջ: Կարօյի եւ Ասլանի այդ երկու ընկերները արզումցի Արթինի քարաւանում ջորեպանի պաշտօն էին